նախապես վճարել է պետական տուրքի գումարը, հայցը ենթակա է բավարարման, հետևաբար, ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից, Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 117 000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում, ներկայացված հայցադիմումի համար պետական տուրքից և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարից բացի, այլ դատական ծախսերի հետ կապված պահանջներ չեն ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. Հայցը բավարարել:

1.1. Մասնակի անվավեր ճանաչել «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու, Արսեն Ղուլիջանյան ԱՁ-ին հաղթող ճանաչելու մասով «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի 27.03.2024 թվականի թիվ 3 արձանագրությունը:

1.2. Որպես ածանցյալ պահանջ՝ անվավեր ճանաչել «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

2. Պատասխանող «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ից հօգուտ հայցվոր «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի բռնագանձել 117 000 (հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

2.1. Պատասխանող «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ից հօգուտ հայցվոր «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի բռնագանձել 150 000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության

գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Սամվել Բաբայան**

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*